ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ № 27

« 18 » «12» 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 9 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով.

Արարատի մարզի Բերքանուշ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Արարատի մարզի Բերքանուշ համայնքի ավագանու 2020թ. դեկտեմբերի 18-ի թիվ 9 հերթական նիստի օրակարգը՝

1. Բերքանուշ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 03 հա հասարակական կառուցապատման նպատակով հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին:
2. Բերքանուշ համայնքի բնակիչ Արայիկ Մկրտչյանի ավտոմեքենայի գույքահարկը զիջելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բերքանուշ համայնքում 2021թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
4. Արարատի մարզի Բերքանուշ համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
5. Արարատի մարզի Բերքանուշ համայնքի <<Խնամակալության և հոգաբարձության>> հանձնաժողով ստեղծելու մասին:
6. Արարատի մարզի Բերքանուշ համայնքի 2021թ. բյուջեն հաստատելու մասին:
7. Բերքանուշ համայնքի բնակչուհի Լուսինե Հայրապետյանի հողի հարկը մասնակի զիջելու մասին:

Որոշումն ընդունվեց միաձայն

1. Իսաջանյան Գոհարիկ կողմ
2. Ադամյան Վարդան կողմ
3. Բաղրամյան Սուրիկ կողմ
4. Վարդանյան Տիգրան կողմ

Համայնքի ղեկավար՝ Մ.Գ. Հայրապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ № 28

« 18 » « 12 » 2020թ.

ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03 ՀԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Արարատի մարզի Բերքանուշ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բերքանուշ համայնքի սեփականություն հանդիսացող 03 հա հասարակական կառուցապատման նպատակով հողամասը ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքի 100 տոկոսի չափով՝ մեկ քմ 528 դրամ արժեքով օտարել Բերքանուշ համայնքի բնակիչ Ավետիք Հովհաննիսյանին, քանի որ նա 99 տարի ժամկետով /համաձայն նոտարական պայմանագրի/ վարձակալում է նշված հողամասը:

Որոշումն ընդունվեց միաձայն

1. Իսաջանյան Գոհարիկ կողմ
2. Ադամյան Վարդան կողմ
3. Վարդանյան Տիգրան կողմ
4. Բաղրամյան Սուրիկ կողմ

Համայնքի ղեկավար՝ Մ.Գ. Հայրապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ № 29

« 18 » « 12 » 2020թ.

ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԱՅԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի դրույթներով.

Արարատի մարզի Բերքանուշ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բերքանուշ համայնքի բնակիչ՝ Արայիկ Մկրտչյանի ավտոմեքենայի գույքահարկը զիջել 6400 (վեց հազար չորս հարյուր) դրամի չափով:

Որոշումն ընդունվեց միաձայն

1. Իսաջանյան Գոհարիկ կողմ
2. Ադամյան Վարդան կողմ
3. Վարդանյան Տիգրան կողմ
4. Բաղրամյան Սուրիկ կողմ

Համայնքի ղեկավար՝ Մ.Գ. Հայրապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ №-30Ն

« 18 » « 12 » 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով

Արարատի մարզի Բերքանուշ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բերքանուշ համայնքում 2021 թվականին սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը:

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության /տեղադրման/ /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար՝

ա) հիմնական շենքերի և շինությունների համար

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների , ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 11.750 դրամ:

բ) սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար

բա) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 22.500. դրամ:

բբ) 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի շինությունների համար՝ 37.500 դրամ:

բգ) 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 37.500 դրամ:

բդ) 3000-ից և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 75.000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 2250 դրամ:

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 3750 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի, շինությունների, վերակառուցման ուշեղացման, վերականգնման, արդիականացման, բարեկարգման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) Չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 2250 դրամ:

բ) Բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների , շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների/ այդ թվում ստորգետնյա /հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի առաջին մասի որոշման 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը շնքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառական նշանակության փոփոխության մասով:

գ) Նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / հետևանքով շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,

ապա սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն , որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար օրացույցային տարվա համար 50.000 դրամ:

5. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

1/ Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 2500 դրամ:

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 5000 դրամ:

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 6500 դրամ:

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմալերպման դեպքում՝ 10.000 դրամ:

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12.500 դրամ:

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և որ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22.500 դրամ:

2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ:

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետրընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ:

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 6500 դրամ:

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10.000 դրամ:

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 12.500 դրամ:

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 22.500 դրամ:

6. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համարյուրաքանչյուր օրվա համար 175 դրամ մեկ քառակուսի մետրի համար:

7. Համայնքի վարչական տարածքում առևտրի հանրային սննդի զվարճանքի շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտների, խաղատների և բաղնիքների (սաունաների) ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվության համար օրացույցային տարվա համար.

ա) առևտրի օբյեկտների համար՝ 50.500 դրամ

1) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 100.000 դրամ
2) բաղնիքների /սաունաների/ համար՝ 500.000 դրամ
3) խաղատների կազմակերպման համար 500.000 դրամ
4) շահումով խաղերի համար 500.000 դրամ
5) վիճակախաղերի համար 150.000 դրամ

8. Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է.

Հիմնական շինությունների ներում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընսհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 5000 դրամ:

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 7500 դրամ :

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 10.000 դրամ:

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 15.000 դրամ:

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 20.000 դրամ:

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 30.000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների ներսում

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 1000 դրամ:

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 1500 դրամ:
գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 2000 դրամ:
դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 4000 դրամ:
ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 8000 դրամ:
զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 15.000 դրամ:
9. Համայնքի վարչական տարածքում տեղադրվող գովազդների թույլտվություններ յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝
ա. Ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 600 դրամ:
բ. Թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 1050 դրամ:
գ. Այլ արտաքին գովազդի համար՝ 750 դրամ
դ. Սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ
ե. Դատարկ գովազդային վահանակների համար համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.
զ. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարաել է իր կազմակերպության գովազդը համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ի չափով:
10. Համայնքի խորհրդանիշները (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար օրացույցային տարվա 75.000 դրամ:
11. Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար օրացույցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 7500 դրամ:
12. Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգենազստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և մատուցման թույլտվության համար օրացույցային տարվա համար 375.000 դրամ:
13. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համա՝ օրացույցային տարվա համար 150.000 դրամ:
14. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղում վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար 40.000 դրամ:
Սահմանել հետևյալ վճարների տեսակները՝
1) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար վճար սահմանել 1000 դրամ:
2) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և նման այլ աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել 1000 դրամ:
3) Համայնքի կողմից կամակերպվող աճուրդների և մրցույթների մասնակցության համար համայքնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000 դրամ:
4) Աղբահանության վճարի սակագինը սահմանել.

ա. Համայնքի բնակչությունից 1 անձի հաշվով ամսեկան 50 դրամ:

բ. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների օբյեկտների յուրաքանչյուր քառակուսի մետրի համար ամսեկան 20 դրամ:

գ. Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների 1 քմ-ի համար ամսեկան 5 դրամ:

դ. Կրթական, մշակութային առողջապահական սպորտային շինությունների 1քմ-ի համարամսեկան 2 դրամ:

5. Համայնքը սպասարկող անասնաբույժի ծառայությունից օգտվելու վճարի դրույքաչափը սահմանել.

Յուրաքանչյուր կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումների իրականացման համար (մեկ պայմանական գլխի հաշվարկման գործակցով) 100 դրամ:

Որոշումն ընդունվեց միաձայն

1. Իսաջանյան Գոհարիկ կողմ
2. Ադամյան Վարդան կողմ
3. Վարդանյան Տիգրան կողմ
4. Բաղրամյան Սուրիկ կողմ

Համայնքի ղեկավար՝ Մ.Գ. Հայրապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ № 31-Ն

«18 » «12 » 2020թ.

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՂԵԿԱՎԱՐՎԵԼՈՎ <<ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 18-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ԿԵՏՈՎ ԵՎ 55-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՎ.

Արարատի մարզի Բերքանուշ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Բերքանուշ համայնքի 2021թ. բյուջեն համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց միաձայն

1. Իսաջանյան Գոհարիկ կողմ
2. Ադամյան Վարդան կողմ
3. Բաղրամյան Սուրիկ կողմ
4. Վարդանյան Տիգրան կողմ

Համայնքի ղեկավար՝ Մ.Գ. Հայրապետյան

Հավելված
Բերքանուշ համայնքի ավագանու 2020թ.
Դեկտեմբերի 18-ի թիվ 31- Ն որոշման

2021թ.-ի բյուջեն հաստատել 55333.0 հազ. դրամ
Բյուջեի եկամուտները կազմում է 55333.0 հազ. դրամ
Որից՝ գույքահարկ 6500.0 հազ. դրամ
հողի հարկ 4700.0 հազ. դրամ
վարձակալական հողեր 350.0 հազ. դրամ
դոտացիա 41876.6 հազ. դրամ
տեղական տուրքեր 706.4 հազ. դրամ

Ծախսերի բաշխումը

4111-աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ, տարեկան արձակուրդ. վճար 18500.0 հազ. դրամ	
4112- պարգևատրում	1500.0 հազ. դրամ
4212- էներգետիկ ծառայություն, որից գազ	450.0 հազ. դրամ
լույս	800.0 հազ. դրամ
4213-դեռատիզացիա	60.0 հազ. դրամ
4214- կապի ծառայություն	300.0 հազ. դրամ
4221-գործուղում	200.0 հազ. դրամ
4231-Մխչյան	420.0 հազ. դրամ
4232-համակարգչային ծառայություն	250.0 հազ. դրամ
4824-հրշեջ ծառայություն	50.0 հազ. դրամ
4234-թերթեր	300.0 հազ. դրամ
4235-աուդիտ	700.0 հազ. դրամ
4241-մասնագիտ. ծառայություն	300.0 հազ. դրամ
4261- գրենական պիտույքներ	300.0 հազ. դրամ
4264-տրանսպորտային նյութեր	600.0 հազ. դրամ
4269-նպատակային նյութեր կրակմարիչներ	1500.0 հազ. դրամ
4239-ընդհանուր բնույթի ծառայություն	300.0 հազ. դրամ
4823-ծառայողական մեքենայի տեխզննում	50.0 հազ. դրամ
4215-ԱՊՊԱ	60.0 հազ. դրամ
Ընդամենը՝	**26640.0 հազ. դրամ**
Գրադարանային ծառայություն	
4111-գրադարանային ծառայություն	1500.0 հազ. դրամ
4212-պարգևատրում	120.0 հազ. դրամ
4269-Ընդհ. բնույթի ծառայություն	
4261- գրենական պիտույքներ	80.0 հազ. դրամ
Ընդամենը՝	**1700.0 հազ.դրամ**
Մշակութային միջոցառումների իրականացում	
4111-մշակույթի տան աշխատավարձ	4500.0 հազ. դրամ
4142-պարգևատրում	320.0 հազ. դրամ
4269-նպատակային նյութեր նվերներ	1000.0 հազ. դրամ
4239-ընդհանուր բնույթի այլ ծառայություններ (Մայիսի 9)	400.0 հազ. դրամ
Ընդամենը՝	**6220.0 հազ.դրամ**
Թատերական ներկայացում	
4239-ընդհանուր բնույթի ծառայություն, (երգիչ, երգչուհիներ)	150.0 հազ. դրամ

Սոց անապահով անձանց աջակցություն	
4729-այլ նպաստ	4000.0 հազ. դրամ
4726-թաղման նպաստ	1000.0 հազ. դրամ
4239-Ընդհ. բնույթի ծառ.	
Ընդամենը՝	**5000.0 հազ.դրամ**
Հասարակական կազմակերպություններին աջակցություն	
4819-նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	300.0 հազ. դրամ
Կենսաբամազանություն և բնության պաշտպանություն	
4239-ընդհանուր բնույթի ծառայություն	200.0 հազ. դրամ
Նախադպրոցական ուսուցում	
4639-ընդհանուր բնույթի ծառայություն մանկապարտեզ	2000.0 հազ. դրամ
Ընդամենը՝	**2000.0 հազ.դրամ**
Գույքի նկատմամբ իրավ. գրանցում և տեղեկ. տրամադրում	
4819-համայնքների միություն	60.0 հազ. դրամ
4841-չափագրում տեղաձևում	1000.0 հազ. դրամ
Ընդամենը՝	**1060.0 հազ.դրամ**
Աղբահանություն և սան մաքրում	
4213-կոմունալ ծառայություն	1200.0 հազ. դրամ
4239 ընդհ. բնույթի այլ ծառայություններ	500.0 հազ. դրամ
Ընդամենը՝	**1700.0 հազ. դրամ**
Գյուղ նշանակ. կենդանին. պատվաստում	
4241- մասնագիտական ծառայություն	580.0 հազ. դրամ
Արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում	
4212-էներգետիկ ծառայություն	1600 հազ.դրամ
4239-ընդհանուր բնույթի ծառայություն ( )	700.0 հազ.դրամ
Ընդամենը՝	**2300.0** հազ.դրամ
Ջրային կառույցների շահագործում և պահպանում	
4213-կոմունալ ծառայություն	150.0 հազ.դրամ
Բժշկական ծառայություն	
4639- այլ ընթացիկ դրամաշնորհ	150.0 հազ.դրամ
Կրթության այլ դասին չպատկանող	
4637-ֆին.աջակցություն, գրքեր	450.0 հազ.դրամ
Մայրուղիների և փողոցների վերակառուցում	
4251 - շենք շինության ընթացիկ նորոգում	1300.0 հազ. դրամ
Ընդամենը՝	1300.0 հազ. դրամ
Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ	
4891- պահուստային միջոցներ	4433.0 հազ. դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ № 32 -Ն

«18» « 12» 2020թ.

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերի պահանջներով.

Արարատի մարզի Բերքանուշ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Արարատի մարզի Բերքանուշ համայնքի ղեկավարի 2021 թվականի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

Աշխատակազմի թվաքանակը - 13

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափերը /ՀՀ դրամ/
Համայնքի ղեկավար		275000
Հայեցողական պաշտոններ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	165000
Համայնքային ծառայության պաշտոններ		
Աշխատակազմի քարտուղար /1.2.-1/	1	165000
Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	162000
Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	116700
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	112300
Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/	1	104850
Քաղաքացիական աշխատանք		
Մշակույթի տան տնօրեն	1	101450
Գրադարանավար	1	104850
Տեղսպասարկման անձնակազմ		
Համակարգչային օպերատոր	1	104850
Հավաքարար	2	98600, 101900
Կատարածու	1	101900

Ընդամենը	13	1714400

Որոշումն ընդունվեց միաձայն

1. Իսաջանյան Գոհարիկ կողմ
2. Ադամյան Վարդան կողմ
3. Բաղրամյան Սուրիկ կողմ
4. Վարդանյան Տիգրան կողմ

Համայնքի ղեկավար՝ Մ.Գ. Հայրապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ № 33

«18» « 12» 2020թ.

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ>> ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. թիվ 168 որոշմամբ Արարատի մարզի Բերքանուշ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Ստեղծել <<Խնամակալության և հոգաբարձության>> հանձնաժողով բաղկացած հինգ անդամից.

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մարտիրոսյան /գյուղ. մասնագետ/

Քարտուղար՝ Ռ. Համբարձումյան /աշխատակազմի քարտուղար/

Անդամներ՝ Ս. Սիմոնյան /բուժքույր/

Գ. Իսաջանյան /ավագանու անդամ/

Հ. Հովսեփյան / ավագանու անդամ/

2. Ուժը կորցրած ճանաչել Բերքանուշ համայնքի ավագանու 2017թ. հունվարի 30-ի <<Խնամակալության և հոգաբարձության>> հանձնաժողով ստեղծելու մասին № 05 որոշումը:

Որոշումն ընդունվեց միաձայն

1. Իսաջանյան Գոհարիկ կողմ
2. Ադամյան Վարդան կողմ
3. Բաղրամյան Սուրիկ կողմ
4. Վարդանյան Տիգրան կողմ

Համայնքի ղեկավար՝ Մ.Գ. Հայրապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ № 34

« 18 » « 12 » 2020թ.

ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԼՈՒՍԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՀՈՂԻ ՀԱՐԿԸ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի դրույթներով.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բերքանուշ համայնքի բնակչուհի Լուսինե Հայրապետյանի հողի հարկի վճարման ժամանակ սխալմամբ գերավճար են հաշվարկվել նրա ամուսնու Ֆելիքս Կարապետյանի անվամբ հողի հարկի նկատմամբ, իսկ Լուսինե Հայրապետյանի պակաս հաշվարկված հարկի վրա գոյացել է տույժ ու տուգանք.

Արարատի մարզի Բերքանուշ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բերքանուշ համայնքի բնակչուհի Լուսինե Հայրապետյանի հողի հարկը զիջել 16150 (տասնվեց հազար հարյուր հիսուն) դրամի չափով:

Որոշումն ընդունվեց միաձայն

1. Իսաջանյան Գոհարիկ կողմ
2. Ադամյան Վարդան կողմ
3. Վարդանյան Տիգրան կողմ
4. Բաղրամյան Սուրիկ կողմ

Համայնքի ղեկավար՝ Մ.Գ. Հայրապետյան